



ՀԱՅ ԱՄԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԳՈՒԼԷՃ ԼՐԱՏՈՒ

ԻՎ. տարի

Թիւ 1



Հայ Ամետարանական Գուլէճի մեծ ընտանիքի սիրելի հարազատներ,

Տարի մը եւս բոլորեցինք եւ եղանք 97 տարեկան: 2019-ը դիմաւորեցինք յոյսերով եւ մաղթանքներով: Միամտութի՞ն, լաւատեսութի՞ն...: Մօտեցումը կախեալ է նկարագրէ, ապրուած փորձառութենէ եւ այլ գործօններէ: Մենք, Հայ Ամետարանական Գուլէճին մէջ, կը սիրենք ըլլալ իրատես, բայց միշտ հաւատքով լեցուած լալին ձգտող: Անցեալ տարին դիտելով ու հաշուեյարդար մը ընելով, իրատեսօրէն կը քննենք մեր կորուստներն ու բացթողումները, բայց լաւատեսօրէն կը կեդրոնանանք ձեռքբերումներուն եւ յաջողութիւններուն վրան: Փմնք Աստուծոյ, որ քիչ չեն անոնք: Այդպէս դիմացանք բազմաթիւ թոհուրհերու՝ անցնող 45 տարիներուն:

2019-ը կը փակենք դժուար օրերու մէջ: Լիբանանը հարուածած տնտեսական վերջին տագնապը լուրջ մարտահրաւերներու դիմաց դրած է բոլորս: Թոյլ պիտի տանք, որ վախն ու անորոշութիւնը մշուշեն մեր հայեացքը, թէ երկնային լոյսով պայծառացած հայեացքով պիտի նայինք ապագային: Վստահաբար վերջինը: Մարտահրաւերները կը կոփեն մեր կամքը եւ մեր բարեկամներուն հանդէպ մեր վստահութիւնը ուժ կու տայ մեզի, որ 2020-ին ըսենք «բարի եկար, նոր տարի, գալուստդ ըլլայ բարի»:

Սիրով՝
ԱՐՄԷՆ ԻԻՐՆԵՇԼԵԱՆ






Աստուծոյ շնորհքով Սեպտեմբեր 24-ին Հայ Աւետարանական Գոլէճը բացաւ իր դռները նախկին եւ նորեկ աշակերտներու դիմաց, ու քարեղէն շէնքը կրկին հոգի եւ շունչ ստացաւ: Մանուկներուն ճոռուղիներ, պատանիներուն խաղերը եւ երիտասարդներուն աւիւնը կեանք տուին դպրոցին: Տեսլապաշտ հիմնադիրները այս կրթական հաստատութիւնը հիմնեցին եւ իբրեւ աւանդ յանձնեցին մեզի՝ բոլորիս, որ պատասխանատու ենք զայն պահելու եւ փոխանցելու յաջորդներուն, որպէսզի Ս. Մեսրոպի սխարանքով հայացած Տիրոջ անմահ Խօսքը միշտ կենդանի մնայ այս պատերուն մէջ:



Դպրոցը այս տարի 134 աշակերտներով սկսաւ իր գոյութեան 97-րդ տարին: Յաղթանակներով եւ տագնապաններով լի 97 տարիներ, որոնց ընթացքին Գոլէճը ազգին տուաւ 1601 շրջանաւարտներ եւ նոյնքան ու աւելի՝ թերաւարտներ, որոնք լիբանանեան դէպքերու բերումով կամ այլ պատճառներով մեկնեցան դպրոցէն կամ երկիրէն, բայց կը շարունակեն երախտապարտ մնալ անոր հանդէպ, սատարելով այս կամ այն ձեւով:

Թող Տէրը իմաստութիւն շնորհէ բոլորիս, որ շարունակենք այն՝ ինչ սկսաւ 97 տարի առաջ Իր անուան փառքին եւ հայ ժողովուրդին պայծառութեան համար:



▶ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹԻՒՆՆԵՐ

Տիկնանց ընկերային յանձնախումբի եւ Տիկնանց օժանդակ հիմնադիր մարմինի ջանքերով հանգանակուած գումարներով հիմնովին նորոգութեան ենթարկուեցաւ բակի աղջկանց գուգարանը՝ բարելաւելու համար աշակերտութեան կենցաղային պայմանները:

Վարձքը կատար դպրոցին նուիրեալ տիկիւններուն եւ անոնց գործունէութիւնները քաջալերող ՀԱԳ-ի բարեկամներուն:

Յատուկ շնորհակալութիւն ճարտարագէտ Եղիկ Թորոսեանին (1995-ի շրջանաւարտ), որ բժախնդրութեամբ իրականացուց եւ վերահսկեց նորոգութեան աշխատանքները:



▶ ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՀԱՒԱՔ

Լիբանանի ժողովրդական ապստամբութեան լոյսին տակ, դպրոցի Աշակերտական խորհուրդին կազմակերպութեամբ, Ուրբաթ, 8 Նոյեմբերին, աշակերտները 2 ժամնոց հաւաք մը կազմակերպեցին դպրոցին մէջ «ԱՊԱԳԱՆԻՍ ԱԻԵԼԻ ԿԱՐԵԻՈՐ Է» նշանաբանով: Մեծերը նախ բաժնեկցեցան իրենց մտահոգութիւնները եւ մտորումները, ապա փոքրերուն հետ դպրոցի մուտքին վանկարկեցին երկրին մէջ բարեփոփոխումներ պահանջող լոզունգներ, երգեցին լիբանանեան հայրենասիրական երգեր: Հայկազեան համալսարանի կարգ մը աշակերտներ քաջալերեցին զիրենք իրենց ներկայութեամբ: Աշակերտներուն զօրակցեցան նաեւ տնօրէնութիւնը եւ ուսուցիչները:

ՆՈՐՈԹԻՒՆՆԵՐ 2019-2020-ին

Առաջին անգամ ըլլալով կ'ունենանք պաշալորեայ բաժինի ԸՆԿԵՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱԺԱՆՍՈՒՆԸ:



ՀԲԸՄ-ի Armenian Virtual College-ին գործակցութեամբ սկսանք ՃԱՏՐԱԿԻ ԵՆ ՀԱՅՈՅ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԱՌՑԱՆՑ ԴԱՍԸՆԹԱՅԸ:



Աւելցան ԹԱՏՐՈՆԻ ԵՆ ARTISTIC GYMNASTICS-ի դասեր:

Երկամսեակը անգամ մը ամբողջ դպրոցը ԱՇԽՈՅԺ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՕՐ պիտի ունենայ:



Անցեալ տարուայ յաջող գործակցութենէն ետք կը շարունակուին AVC-ի «ՀԱՅ ԵՐԱԺՇՏՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ» ԱՌՑԱՆՑ ԴԱՍԵՐԻ:

ԴԱՍԵՐՈՒ ԲԵՈԸ ԹԵԹԵՒՑՆԵԼՈՒ Ի համար, նախակրթարանը շաբաթը մէկ օր տունը դասի պատրաստութիւն պիտի չունենայ:



Ունեցանք առաջին ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴը, որ առիթ պիտի տայ աշակերտութեան մասնակից դառնալու դպրոցի առօրեայ կեանքին առնչուած որոշումներու:

ԼՈՒՐԵՐ ՇՐՋԱՆԱԿԱՐՏՆԵՐԷ



➤ 3 Հոկտեմբեր 2019-ին, ՀՄԸՄ-ի Կեդրոնական վարչությունը վարչապետ Հարիրին պարգևատրած էր միության արտակարգ պատուանշանով, անոր բնակարանին մեջ տեղի ունեցած հանդիսության մը ընթացքին: Պատուանշանին վկայագիրը վարչապետ Հարիրին յանձնած է Հրաչ Սիսեռեան:

➤ ՀԱԳ-ի երկարամեայ նախկին աշակերտ եւ դպրոցի բարերարներէն ֆրանսաբնակ Հրաչ Սիսեռեան ՀՄԸՄ-ի 12-րդ Պատգամատրական ընդի. ժողովին (14 Հոկտեմբեր 2019) պատուեցաւ միության բարձրագոյն «Արժանեաց շքանշան»-ով իր երկարամեայ ծառայության համար, իսկ 19 Հոկտեմբերին ընտրուեցաւ ՀՄԸՄ-ի կեդրոնական վարչության անդամ:

➤ 19 Հոկտեմբեր 2019-ին Ուոթըրթաունի մեջ տեղի ունեցած AMAA-ի 100-րդ համաժողովին ՀԱԳ-ի շրջանաւարտներ տոքթ. Հրայր Ահարոնեան (1962) եւ տիկ. Սեդա Լոշխաճեան-Նալպանտեան (1964) երեք տարուայ համար վարչական ընտրուեցան:

➤ 1 Հոկտեմբեր 2019-ին Երեւանի Թիֆէնքեան հիմնադրամի նախաձեռնութեամբ «Արմատներ» կեդրոնին մեջ կազմակերպուեցաւ հանդիպում մը 1968-ի շրջանաւարտ, գրող, համաշխարհային ուժանիւթի ոլորտի փորձագէտ ճանապարհորդ դոկտ. Վահան Զանոյեանի հետ:

➤ 2 Հոկտեմբեր 2019-ին «Արորա» մարդասիրական նախաձեռնության ներկայացուցիչները, որոնց մեջ էր նախկին երկարամեայ աշակերտ դոկտ. Նուպար Աֆեյեան, Վատիկանի մեջ արժա-



նացան Ֆրանչիսկոս Պապի տեսակցութեան:

➤ Համագայինի Լիբանանի Շրջանային Վարչութեան Ի.Զ. ժողովին, 4 Սեպտեմբեր 2019-ին Համագային մշակ. ընկերակցութեան նոր շրջ. վարչութեան անդամ ընտրուեցաւ 1987-ի շրջանաւարտ Մ. եւ Հ. Արսլանեան Ճեմարանի պաշտօնեայ Տիկ. Սիլվա Սողոմոնեան:

➤ 21 Օգոստոս 2019-ին աշխարհի 12 երկիրներէ եկած 48 հոգինոց հայկական խումբ մը նուաճած է Արարատի գագաթը, որոնց մեջ եղած է Լաս Վելկասի մեջ Հայաստանի Հանրապետության պատուոյ հիւպատոս, ՀԱԳ-ի նախկին աշակերտ Ատրուշան Արմէնեանն ու անոր երկու դուստրերը:

➤ 14 Յուլիս 2019-ի յետմիջօրէին Թէքէեան Մշակութային Միութեան Ալթատենայի Պէշկէօթիւրեան կեդրոնի սրահին մեջ կայացած է դոկտ. Յովհ. Ահմա-



րանեանի հեղինակած «Հայը եւ Հայաստանը Աստուածաշունչին մեջ» հատորին ներկայացումը եւ գինեւծօնը: Ձեռնարկին բացման խօսքը կատարած է ԹՄՄ Կլէնտէյլ-Փասատենայի վարչութեան անդամ, 1973-ի շրջանաւարտ տիկ. Աստղիկ Խանճեան (ծն. Ապաճեան), հանգամանօրէն ներկայացնելով հեղինակը:

➤ ՀԱԳ-ի պատուակալ տնօրէն եւ 1955-ի շրջանաւարտ դոկտ. Զաւէն Մսրըլեան 27 Յունիս 2019-ին իր MA ստանալուն 55-ամեակին ա-



ռիթով, այլոց կարգին, Պէյրութի Ամերիկեան Համալսարանի նախագահէն յատուկ պատուանշան ստացաւ:

➤ 9 Ապրիլ 2019-ին ՀԱԳ-ի նախկին աշակերտուի Տիկ. Աննա Օհաննէսեան-Շարբէն Նորվան Արք. Զաքարեանի ժողովրդական համալսարանի կողմէն ստանալով մասնակցած է, որուն նիւթն էր «100 առ հարիւր ֆրանսացի, 100 առ հարիւր հայ – վերցնել կրկնակ մշակոյթի մարտահրաւիրը»:



➤ 3 Մարտ 2019-ին ՀԱԳ-ի նախկին աշակերտ վեր. Կալվին Մադրեան ստանձնած է Սան



Ֆրանսիսկոյի Գողգոթա Հայ Ժողովական Եկեղեցւոյ 18-րդ հովիւի պաշտօնը:

➤ 3 Մարտ 2019-ին, 1971-ի շրջանաւարտ մաէսթրօ Վաչէ Պարսումեան, AMAA-ի եւ Լարք երաժշտական ընկերակցութեան միացեալ կազմակերպութեամբ, ղեկավարած է Պրահմգ նուագախումբը, ներկայացնելով Պրահմգի «Յոյսի Խոստում» Requiem-ը Փասատենայի մեջ:

➤ Նոյեմբերի 28-29-ին Հայաստանի Ազգային գրադարանին մեջ կազմակերպուած հայ մամուլի գիտաժողովին կը մասնակցէին նաեւ մատենագէտ եւ 1960-էն 1983 ՀԱԳ-ի ուսուցիչ Ար-

Պարսապեց Դոկտ. Զաէն Մարդեան



տաշէն Տէր Խաչատուրեանի որդիները՝ շրջանաւարտներ Զարեհ եւ Տարօն Տէր Խաչատուրեանները (1975 եւ 1978): Անոնք Ազգային գրադարանին նուիրած են իրենց հօր անձնական գրադարանէն 40 հնատիպ գիրքեր եւ այլ նիւթեր, ներառեալ 1550-ին հրատարակուած լատիներէն Նոր կտակարան մը եւ 1669-ին Ամսթերտամի մէջ տպագրուած Առաքել Դարիժեցիի «Գիրք Պատմութեանց»-ը:

➤ ԱՄՆ-ի Կիլիկեան արեւմտեան թեմի Ազգ. երեսփոխանական ժողովի 47-րդ նստաշրջանին, առաջնորդ Մուշեղ արք. եւ Ազգ. վարչութիւնը գնահատանքի արժանի գտած են Ս. Քառասնից մանկանց եկեղեցւոյ երկարամեայ նուիրեալ եւ հոգաբարձութեան փոխատենապետ, ՀԱԳ-ի 1957-ի շրջանաւարտ Կարպիս Գարամարտեանը, անոր երկար տարիներու նիւթաբարոյական զօրակցութեան եւ ծառայութեան համար:

➤ 10 Օգոստոս 2019-ին, Master-class խմբավարներու Լոնտոնի 2019-ի հաւաքի կազմակերպիչ Արքիմ Հովոյս յատուկ վկայականով պատուած է ՀԱԳ-ի 1998-ի շրջանաւարտ մաէսթրօ Կարօ Անեսեանը, Լոնտոնի դասական մեներգողներու մրցումին (5-10 Օգոստոս) յաջող խմբավարութեան համար:

ՎՐԻՊԱԿ

«Լրատու»-ի նախորդ թիւին մէջ շրջանաւարտուողի Արագ Տէմիրճեանին համալսարանական վկայականը թիւրիմացաբար նշուած է BS ճարտարապետութեան մէջ, մինչ պէտք է ըլլայ **B.Arch**, որ աւելի բարձր վկայական ըլլալով ենթակային իրաւասութիւն կու տայ անմիջապէս կիրարկելու իր մասնագիտութիւնը:

Կը հայցենք իր ներողամտութիւնը:




դութեան:

† 1982 – 1997 ՀԱԳ-ի հոգաբարձու, բժշկական գիտաշխատանոցի երկարամեայ պատասխանատու Գասպար Մաղրրեան (1937-2019) մահացաւ 7 Հոկտեմբեր 2019-ին Պէյրութ, յետ անողորմ հիւանդութեան:



† 1962 – 1964 ՀԱԳ-ի նախակրթարանի պատասխանատու, վաստակաւոր կրթական մշակ Կարօ Պետրոսեան (1930-2019) մահացաւ 22 Յունիս 2019-ին, Լոս Անճելոսի մէջ:




† 1954-ի շրջանաւարտ, միաւորակաւ երաժիշտ եւ գեղանկարիչ Խաչիկ (Խաչատուր) Փիլիկեան (1937-2019) մահացաւ 28 Յունիս 2019-ին, Լոնտոնի մէջ:




† 1956-ի շրջանաւարտ, ՀԱԳ-ի գիտութեան վաստակաւոր ուսուցիչ (1962-1970) Վահան Շահինեան (1938-2019)

մահացաւ 10 Յունիս 2019-ին, Թորոնթոյի մէջ, յետ անողորմ հիւանդութեան:

† ՀԱԳ-ի 1953-1954 կրթական տարեշրջանի Ժ. դասարանի աշակերտ, Լոս Անճելոսի «Նոր կեանք» շաբաթաթերթի խմբագիր Գրիգոր Շէնեան (1934-2019), մահացաւ 6 Յունիս 2019-ին Լոս Անճելոսի մէջ:



† 1954-ի շրջանաւարտուողի Տիկ. Լուսվարդ Պետրիեան-Եալընդաթեան (1936-2018) մահացաւ Պէյրութի մէջ յետ անողորմ հիւանդութեան:



† Յապաղումով տեղեկացանք մահը նախկին աշակերտուհի Տիկ. Արրիւն Տէրպալեան-Փոսթեանի (1951-2018), որ պարտաւոր է 31 Հոկտեմբեր 2018-ին Ֆրեզնոյի մէջ, յետ անողորմ հիւանդութեան:



† Մեծ յապաղումով իմացանք, որ ՀԱԳ-ի նախկին (1979-1982) հոգաբարձու օրդ. Անի Կէօնճեան (1920-2017), որ 40 տարիներ Պէյրութի Ամերիկեան դեսպանարանի մէջ աշխատած էր, մահացած է Լոս Անճելոսի մէջ 2017-ին:

Այցելեցէք

ՀԱՅ ԱՐԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԳՈԼԵՃԻ կայքէջը

<http://www.aecbeirut.edu.lb/>

facebook: Armenian Evangelical College

ՊՍԱԿ

- 2007-ի շրջանաւարտ Կարօ Քէօրքիւնեան 19 Հոկտեմբեր 2019-ին պատկուեցաւ օրդ. Արաքսի Քեմանճեանի հետ, Ս. Գրիգոր Լուսաւորիչ մայր տաճարին մէջ, Անթիլիաս:
- 2003-ի շրջանաւարտ Յոլակ Թորոսեան 8 Սեպտեմբեր 2019-ին պատկուեցաւ օրդ. Մարգրիտ Անթոնեանի հետ, Ս. Նշան մայր եկեղեցիին մէջ, Պէյրութ:
- 2005-ի շրջանաւարտ Շանթ Դանիէլեան 17 Օգոստոս 2019-ին պատկուեցաւ նախկին աշակերտուհի օրդ. Վարդենի Պոյաճեանի հետ, Ս. Նշան մայր եկեղեցիին մէջ, Պէյրութ:

ԲԱՆՏԱՌՈՐՈՒԹԻՒՆ

- 2005-ի շրջանաւարտ Յակոբ Գէորգեան եւ տիկինը բախարաւորուեցան առջիննէլ դուստրով մը՝ Արրիանա, Մոնթրէալի մէջ, 11 Օգոստոս 2019-ին:

ՃՇԴՈՒՄ

«ԼՐԱՏՈՒ»-ի նախորդ թիւին մէջ նշուած Վիգէն Գրաճեան 2500 տոլարի նուիրատուութիւնը «դոկտ. Զ. Սարգիսեան կրթական ֆոնդ»-ին է, նաեւ տոքթ. Արմէն Կէօնճեանի 500 տոլարի առաջին նուիրատուութիւնը:



Խմբագիր՝ ՏԵՐԵՆ ԴՈՎՏ. ԱՐՄԵՆ ԻՐԱՆԵՐԵԱՆ
 Խորհրդատուներ՝ ՏԻՄ ԵՐԵՄԵԱ ՊԱՐՏՈՅԵԱՆ
 ՏԻՄ ՅԱԿՈԲ ՏԵՄԻՐՃԵԱՆ
 Էջաղորում՝ ԱՆԻ ՔԵՏԵՆԵԱՆ-ՊԱՍԵԹ
 Մ.Ա.Յ.Ա.Ե. ՄԻՈՒԹԵԱՆ ՀՐԱՏԱՐԱԳՈՋԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

ՆՈՒԻՐԱՏՈՒԹԻՒՆՆԵՐ

«ԼՐԱՏՈՒ»-ի նախորդ թիւին ի վեր շնորհակալութեամբ ստացանք հետեւեալ նուիրատուութիւնները:

Բարերար Ռաֆֆի Մանուկեանէն իր տարեկան յարկացումը 14,200 տոլար

ԱՄՆ-ի Արեւմտեան ափի ՀԱԳ-ի

Շրջանաւարտից միութեան միջոցով

Ալպերթ եւ Թերրի Պեզճեան ֆոնտի գումարը 15,000 տոլար
 Պր. Վիգէն Տէր Ղազարեան 200 տոլար

Շրջանաւարտից միութեան կողմէ

Ալլազան հասոյթներէ գոյացած յատկացում 8907 տոլար 88 սենթ

ՀԲԸՄ-էն

«ՀԲԸՄ Զաւէն Մարկեան մրցանակ»-ի գումարը 2486 տոլար

ՏԱՐԵԱՆ ՅԱՏԿԱՅՈՒՄ

Պր. Սարգիս Սիմիթեան 1000 տոլար

ՀԱԳ-ի ԿՐԹԱՆՊԱՍՏԻ ՖՈՆԴԻՆ

Օրդ. Փօլին Սաղըրեան 400,000 լ.ն.

Առ ի երախտագիտութիւն դպրոցին

Տիկ. Լենա Գարակէօզեան-Իւրնէշեան 350,000 լ.ն.

Տիկ. Ռուպինա Թիւրքիւնճեան-Սանտրիք (Փարիզ) 200 տոլար

Դոկտ. եւ տիկ. Արմէն Իւրնէշեան 100,000 լ.ն.

Շրջանաւարտ Կարօ Քէօրքիւնեան եւ Արաքսի Քեմանճեանի
 պատկառողութեան առթիւ:

ՎԵՐԵՐԱՆ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐՈՒ ՊԱՐԳԵՒԱՏՐՄԱՆ ԱՌԹԻՒ

Տէր եւ տիկ. Լեւոն Ղոչախեան 200 տոլար

Տիկ. Լենա Եարտըմեան 300,000 լ.ն.

Օրդ. Լուսին Թապաքեան 100,000 լ.ն.

Պր. Սեդրակ Թոփալեան 100,000 լ.ն.

ՈՂԲ. ԱԽԵՏԻՍ ԿԵՐԵՔՄԵՋԵԱՆԻ ՄԱՀՈՒԱՆ ԱՌԹԻՒ

ՀԱԳ Ոսուցչական կազմ եւ պաշտօնէութիւն 100,000 լ.ն.

Տիկ. Անգինէ Օպէյտէն 100,000 լ.ն.

Ի յիշատակ իր հոր՝ ողբ. Աւետիս Կերեքմեճեանի

«ԴՈՎՏ. ԶԱՒԵՆ ՄԱՐԿԵԱՆ ԿՐԹԱԿԱՆ ՖՈՆԴ»-ԻՆ

Վիգէն Գրաճեան 2500 տոլար

Տոքթ. Արմէն Կէօնճեան (Վահան Շահինեանի յիշատակին) 500 տոլար

Տոքթ. եւ տիկ. Վիգէն Ահարոնեան 300 տոլար

Տէր եւ տիկ. Զարեհ եւ Յասմիկ Մահսերեճեան 200 տոլար

Օրդ. Փօլին Սաղըրեան 100,000 լ.ն.

Տէր եւ տիկ. Զոհրապ Տիշաքճեան 50 տոլար

Տիկ. Ժանէթ Քասունի 25 տոլար

Y.M. PHILIBOSSIAN ARMENIAN EVANGELICAL COLLEGE

P.O. Box 3672-Beirut

Tel: 01 349 816 Fax: 01 751 469

E-mail: A_E_C@cyberia.net.lb

Website: aecbeirut.edu.lb

Facebook: Armenian Evangelical College